ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 28.02.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/23

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ

Բողոքաբեր՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Մարտիրոսյանի

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչ՝ Է. Դավթյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցում, բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Մասնակից)

կողմից 10.02.2020թ.-ին ներկայացրած բողոքը (այսուհետ նաև՝ Բողոք) և կից փաստաթղթերը,

ՊԱՐԶԵՑ

1. <u>Գործի նախապատմությունը</u>

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Մասնակիցը ներկայացրած բողոքով խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.01.2020թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ 4.1. կետով կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը մերժելու վերաբերյալ որոշումը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 4.2. կետով կայացված «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը:

3. Թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 10.02.2020թ.-ին:

10.02.2020թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 12.02.2020թ.-ին հայտարարությունը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

20.02.2020թ.-ին նշանակվել է նիստ:

Բողոքի քննությունն ավարտվել է 20.02.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 28.02.2020թ.-ին:

2. <u>«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն 10.02.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««Նաիրի Ինշուրանս» Ապահովագրական ՍՊԸ-ն /այսուհետ Ընկերություն/ ուսումնասիրելով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Բժշկական ապահովագրության ծառայություններ» ձեռքբերման նպատակով հայտարարված թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրերով գնանշման հարցման հրավերով /այսուհետ հրավեր/ գնահատող հանձնաժողովի 06.02.2020թ. նիստի թիվ 5 արձանագրությունը /այսուհետ Արձանագրություն/ գտնում է, որ այն կայացվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի /այսուհետ Օրենք/, հրավեր մի շարք դրույթների խախտմամբ, որն էլ հանգեցրել է Ընկերության իրավունքների և օրինական շահերի ոտնահարմանը, մասնավորապես.

1. Բողոքարկվող գնման ընթացակարգի ծածկագրերը և առարկան.

Ծածկագիր՝ թիվ[ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1

Գնման Առարկա՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կարիքների համար «Բժշկական ապահովագրության ծառայություններ» ձեռքբերում

Պատվիրատուի անվանում՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՐԱԿ Պատվիրատուի հասցե ՀՀ, Ք. Երևան 0025, Նալբանդյան 128

2. Վեճի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերն ու բողոքաբերի պահանջը.

Հրավերի առաջին մասի 5.2. կետի համաձայն Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Հոդված 28. Հրավերի բովանդակությունը

1. Հրավերը պետք է պարունակի՝

1) հղում հրապարակված հայտարարությանը՝ ի լրումն որի տրամադրվում է հրավերը.

2) մրցույթի ծածկագիրը.

3) հայտերի պատրաստման հրահանգները.

4) որակավորման չափանիշները, մասնակցության իրավունքի պահանջները և դրանց գնահատման կարգը.

5) գնման առարկայի բնութագրերը.

6) հայտերի գնահատման և ընտրված մասնակցի ընտրության կարգը.

7) պայմանագրի նախագիծը.

8) եթե գնումն իրականացվում է չափաբաժիններով, և մասնակիցներին թույլատրվում է հայտեր ներկայացնել գնվող ապրանքների, աշխատանքների և ծառայությունների միայն մի մասի համար, ապա դրա պայմանները և կարգը.

9) հայտով ներկայացվող գնի հաշվարկման կարգը, ներառյալ՝ գինը արտարժույթով ներկայացվելու դեպքում դրա փոխարժեքը.

10) նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

Հրավերի Մաս 1, 5-րդ կետի 5.1. և 5.2. ենթակետերի համաձայն.

<<5.1 Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

5.2 Մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:»:

Հրավերի 8.8 կետի համաձայն՝ Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյուն¬քում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.9 կետի համաձայն՝ Եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա

վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր նեյլկայացրած մասնակիցների թվից նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Այսպիսով, Արձանագրություն համաձայն՝ Հանձնաժողովը արձանագրել է, որ Ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկը համամատած 24.12.2019-ին ներկայացված առաջարկի հետ նվազեցում է պարունակում «Ինքնարժեք» բաղադրիչից, ուստի և Արձանագրության 4.1. կետով որոշել է մերժել Ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկը:

Ընկերության կարծիքով Հանձնաժողովի վերոնշյալ որոշումն իրավաչափ չէ, քանի որ նոր գնային առաջարկով Ընկերությունը չի կատարել նվազեցում «Ինքնարժեք» բաղադրիչից, հետևյալ հիմնավորմամբ.

24.12.2019թ-ին ներկայացված գնային առաջարկով Ընկերության կողմից ներկայացվել է Ինքնարժեք բաղադրիչ 38.400.000 ՀՀ դրամ, որը հաշվարկված է Հրավերով սահմանված գնման ողջ ժամանակահատվածում ապահովագրական ծառայությունների մատուցման համար, այն է դրանում ներառված են գնման սկզբնաժամկետից 01.01.2020թ-ից մինչև Հրավերով սահմանված գնման վերջնաժամկետը 31.12.2020թ-ը /Հիմք Հրավերով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման-վճարման ժամանակացույց փաստաթղթի Ծառայությունների մատուցման ժամկետ դրույթը/:

Ապահովագրության ցանկացած դասով ապահովագրավճարի/ծառայության արժեքի հաշվարկման համար ամենակարևոր գործակիցներից է համարվում ծառայության մատուցման ժամկետը, որը հաշվի առնելով և ապահովագրողի կողմից առաջարկվում և սահմանվում է ապահովագրավճարի չափը:

*Տվյալ պարագայում Ընկերության կողմից մինչև բանակցությունները ներկայացված գնային առաջարկը կատարված է 12 ամիսների համար, այն է 38.400.000/12 և հենց տվյալ հանգամանքի հաշվի առնմամբ էլ Ընկերությունը բանակցությունների ժամանակ առկա հնարավոր ապահովագրության ծառայությունները դիտարկել և հաշվարկել է գնման մնացած ժամանակի գործակցի հաշվի առնմամբ, որը տվյալ պարագայում դիտարկվել է որ հավասարաչափ գործակցով և գնման մնացած 10,5 ամիսների համար առաջարկել է 36,000,000 ՀՀ դրամ դումար, որը նվազ չէ Ընկերության կողմից հաշվարկման ինքնարժեքից, տվյալ պարագայում ինքնարժեք կարող է դիտարկել ամսական արժեք համադրած գնման հնարավոր ժամկետ, այն է 3.200.000*10,5=33.600.000 ՀՀ դրամ գումար:*

Նշվածի հիմանվորման օրինակ կարող է ծառայել օրինակ պարտադիր ապահովագրության դասով ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի օրենսդրական սահմանման տրամաբանությունը, որտեղ ամսական ապահովագրավճարի հաշվարկն իրականացվում է Ժամկետի համար օրենքով սահմանված ոչ հավասարաչափ գործակցով:

Տվյալ պարագայում գնահատող հանձնաժողովը ներկայացված գնային առաջարկների թերի ուսումնասիրության արդյունքում հանգել է այն հետևության, որ Ընկերության կողմից ներկայացված նոր գնային առաջարկով Ընկերությունը կատարել է նվազեցում <<Ինքնարժեք>> բաղադրիչից, որով հանձնաժողովը փաստացի կայացրել է ոչ իրավաչափ որոշում և խախտել է սույն բողոքում թվարկված իրավական նորմերի պահանջները, որն ամիջականորեն հանգեցրել է Ընկերության օրինական շահերի և իրավունքների խախտմանը:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնուժողովի և գնումների հետ կապված բողոքներ քննող անձի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների հետ կապված բողոքներ քննող ւանձիև:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ Բողոքի քննությունը բաց է հանրության համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին գնումների հետ կապված բողոքներ քննող անձը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքի քննության արդյունքներով ընդունված որոշման՝ ուժի մեջ մտնելու օրը:»:

Վերոգրյալով պայմանավորված, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն Բողոքներ քննող անձին խնդրել է՝

1. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.01.2020թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 5 արձանագրությամբ 4.1. կետով կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը մերժելու վերաբերյալ որոշումը Հրավերի պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

2. Դադարեցնել և/կամ չեղյալ հայտարարել թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովի թիվ 5 արձանագրության 4.2. կետով կայացված «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին ընտրված մասնակից ճանաչելու և Հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ որոշումը:

3. Թիվ ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով մրցույթի գնահատող հանձնաժողովին որպես իրավական հետևանք արգելել գնման ընթացակարգի մասով «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի հետ կնքել պայմանագիր:

3. <u>«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 13.02.2020թ.-ին գրությամբ դիմել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը՝ հնարավորություն տալով «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 10.02.2020թ.-ին ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի պատճեններն ու Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն լինելով պատշաճ ծանուցված կայանալիք նիստի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին, ներկայացրել է գրավոր դիրքորոշում և հայտնել հետևյալը.

«Սույնով «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ Պատվիրատու) հայտնում է իր գրավոր անհամաձայնությունը Բողոքում բարձրացված դիրքորոշման կապակցությամբ, մասնավորապես.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետով նախատեսված է հետևյալը. «Հրավերով պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով.

Հրավերի 5.1 կետի համաձայն՝ Առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Հրավերի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 6-ով նախատեսված բժշկական ապահովագրության ծառայությունների մատուցման պայմանագրի N ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 Հավելված 1-ում (ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ-ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ) հստակ նշված է, որ ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգը կազմակերպվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի, համաձայն որի՝ «Մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Ելնելով վերոհիշյալից, հարկ ենք համարում նշել, որ անկախ գնման գործընթացի հետ կապված գործողությունների ընթացքից եւ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված հիմքերով դրա ձգձգումից, Հրավերով ի սկզբանե նախատեսված է եղել, որ ծառայությունները մատուցվելու են մինչեւ 2020թ. դեկտեմբերի 31-ը, սակայն նախատեսված չէ ծառայությունների մատուցման սկզբնաժամկետ, ուստի ծառայությունների մատուցման ժամանակահատված որպես այդպիսին նշված չէ, ծառայությունների մատուցման սկզբնաժամկետ կարող է համարվել պայմանագրի կնքումը, որը դեռեւս կնքված չէ եւ կնքման օրը եւս հայտնի չէ, ուստի «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից վերոհիշյալ բողոքի հիմքում դրած «01.01.2020թ.-ից մինչեւ 31.12.2020թ. գնման ողջ ժամանակահատվածում» եզրույթից իրականությանը համապատասխանում է միայն ծառայությունների մատուցման վերջնաժամկետը, որը Հրավերով սահմանված է 31.12.2020թ.:

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը՝ իր կարիքների համար համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի «Բժշկական ապահովագրության ծառայություններ» ձեռքբերման նպատակով հայտարարել է ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման հրավեր: Գնահատող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) 03.01.2020թվականի որոշմամբ էլեկտրոնային եղանակով միաժամանակ ծանուցել է և հրավիրել է գների նվազեցման շուրջ

միաժամանակյա բանակցությունների՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ին, «Սիլ Ինշուրանսի» ԱՓԲԸ-ին, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ին, «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ-ին և «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ-ին: Գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունները տեղի են ունեցել ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N501 սենյակ հասցեում 2020թվականի փետրվարի 6-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը:

ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովը 06.01.2020թվականի նիստի թիվ 5 արձանագրությամբ որոշեց մերժել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի նոր գնային առաջարկը՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հաղվածի 1-ին մասի 10 կետի և ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1 ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5.1 ենթակետի պահանջները, քանի որ միաժամանակյա բանակցությունների արդյունքում մասնակցի կողմից չի կարող նվազեցվել գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը, դա կարող է հանգեցնել նաև գնումների գործընթացի շրջանակներում ոչ խտրական հիմունքներով կազմակերպման, մրցակցության խրախուսման, գնումների գործընթացի մասնակցելու իրավահավասարության սկզբունքների խախտման:

Իր որոշումը Հանձնաժողովը կայացրել է՝ ուսումնասիրելով նաև ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 29.01.2020թվականի թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/100 որոշումը:

Այսպիսով, Հանձնաժողովը գործել է իրավաչափ՝ օրենսդրության պահանջներին համապատասխան և իր գործողություններով կամ անգործությամբ չի խախտել Ընկերության օրինական շահերը և իրավունքները:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում ենք հաշվի առնել վերոհիշյալ դիրքորոշումը Բողոքի կապակցությամբ վերջնական որոշում կայացնելիս:»:

4. <u>ԳԲՔԱ-ԼՕ-2020/23 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1»

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն հայտով ներկայացրել է 38 400 000 ՀՀ դրամ գումարով «ինքնարժեք» բաղադրիչով գնային առաջարկ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 24.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը չի համապատասխանում հրավերի 1-ին մասի 5.2 կետին՝ մասնավորապես գնային առաջարկի «շահույթ»-ի սյունակը լրացված չէ:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 30.12.2019թ.-ին ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.01.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի բողոքը բավարարվել է՝ պարտավորեցվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դադարեցնել 24.12.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը Հրավերի 1-ին մասի 5.2 կետին չհամապատասխանելու վերաբերյալ որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններն, որը տեղի է ունեցել ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N 501 սենյակ հասցեում 2020թվականի փետրվարի 6-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչները ներկայացրեցին նոր գնային առաջարկներ: Հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից բանակցություններին ներկայացված նոր գնային առաջարկները, համեմատելով այն 24 դեկտեմբերի 2019թ.-ի մասնակիցների կողմից գնման հայտով ներկայացրած գնային առաջարկների հետ արձանագրել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկով նվազեցումը իրականացվել է «Ինքնարժեք» բաղադրիչից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10 կետի և «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով

գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5. 1 ենթակետի պահանջները, որոշել է մերժել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը, քանի նվազեցվել է գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը:

Մասնակցի անվանումը	Հայտով ներկայացված գնային առաջարկը				Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկը			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր Գինը
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	38 400 000	-		38 400 000	36 000 000	-		36 000 000
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	37 162 800	2 797 200		39 960 000	37 162 800	837 200		38 000 000

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 10.02.2020թ.-ին ներկայացված բողոքն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ ենթակետի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Ընթացակարգի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ծառայության արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

Հրավերի 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է ինքնարժեք, շահույթ և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Ինքնարժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանել է գնային առաջարկի ներկայացման համար վավերապայմաններ, որոնցով սահմանվել են, որ այն պետք է բաղկացած լինի ինքնարժեքի, շահույթի և ավելացված արժեքի հարկի ընդհանրական բաղադրիչներից և միևնույն ժամանակ ներկայացված գնային առաջարկը չի կարող պակաս լինել ինքնարժեքից, որի վերաբերյալ տեղեկատվություն է պարունակում նաև հրավերը:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից բժշկական ապահովագրության ծառայությունների ձեռքբերման նպատակով 17.12.2019թ.-ին հայտարարվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ն հայտով ներկայացրել է 38 400 000 ՀՀ դրամ գումարով «ինքնարժեք» բաղադրիչով գնային առաջարկ:

Հանձնաժողովի 24.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկները չեն համապատասխանում հրավերի 1-ին մասի 5.2 կետին՝ մասնավորապես գնային առաջարկի «շահույթ»-ի սյունակը լրացված չէ:

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 30.12.2019թ.-ին ներկայացվել է բողոք, որով վիճարկվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 24.12.2019թ.-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի 30.01.2020թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/102 որոշմամբ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի բողոքը բավարարվել է՝ պարտավորեցվել է «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի դադարեցնել 24.12.2019թ. թիվ 2 արձանագրությամբ կայացված «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը Հրավերի 1-ին մասի 5.2 կետին չհամապատասխանելու վերաբերյալ որոշումը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 03.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ գների նվազեցման շուրջ հրավիրված միաժամանակյա բանակցություններն, որը տեղի է ունեցել ք. Երևան, Նալբանդյան 128, գլխավոր մասնաշենք, 5-րդ հարկ N 501 սենյակ հասցեում 2020թվականի փետրվարի 6-ին ժամը 10:00-ից մինչև 10:30-ը «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ-ի լիազոր ներկայացուցիչները ներկայացրեցին նոր գնային առաջարկներ: Հանձնաժողովը ուսումնասիրելով մասնակիցների կողմից բանակցություններին ներկայացված նոր գնային առաջարկները, համեմատելով այն 24 դեկտեմբերի 2019թ. մասնակիցների կողմից գնման

հայտով ներկայացրած գնային առաջարկների հետ արձանագրել է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկով նվազեցումը իրականացվել է «Ինքնարժեք» բաղադրիչից:

Նույն արձանագրությամբ Հանձնաժողովը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10 կետի և «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ 1-ի 5-րդ կետի 5. 1 ենթակետի պահանջները, որոշել է մերժել «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից ներկայացված նոր գնային առաջարկը, քանի նվազեցվել է գնային առաջարկի ինքնարժեքի բաղադրիչը:

Մասնակցի անվանումը	**Հայտով ներկայացված գնային առաջարկը**				**Բանակցությունների արդյունքում ներկայացված գնային առաջարկը**			
	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գինը	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր Գինը
«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ	38 400 000	-		38 400 000	36 000 000	-		36 000 000
«Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ	37 162 800	2 797 200		39 960 000	37 162 800	837 200		38 000 000

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված գնային առաջարկում ինքնարժեքի բաղադրիչը կազմել է 38 400 000 ՀՀ դրամ: Սակայն տեղի ունեցած բանակցությունների արդյունքում Մասնակիցը իր ներկայացրած գնային առաջարկը նվազեցրել է արդեն հստակ նախատեսված ինքնարժեքից, որի արդյունքում «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի ներկայացրած գինը առանց ԱԱՀ կազմել է 36 000 000 ՀՀ դրամ:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը և Հրավերի 5.1-րդ կետը, քանի որ բանակցությունների ժամանակ մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով իրավունք չունի նվազեցնելու գնային առաջարկով ներկայացված ինքնարժեքի գումարը, իսկ այդ փաստը Հանձնաժողովը պետք է գնահատի որպես հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող և այդ հիմքով մերժի մասնակցի ներկայացրած հայտը:

Հակառակ դեպքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ կխախտվեն Օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը՝ գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպումը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի

ընդլայնումը և նրանց միջև մրցակցության խրախուսումը, և Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները՝ ցանկացած անձի՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը: Այն դեպքում, երբ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Անդրադառնալով բողոքով Մասնակցի այն պնդմանը, որ *«Տվյալ պարագայում Ընկերության կողմից մինչև բանակցությունները ներկայացված գնային առաջարկը կատարված է 12 ամիսների համար, այն է 38.400.000/12 և հենց տվյալ հանգամանքի հաշվի առնմամբ էլ Ընկերությունը բանակցությունների ժամանակ առկա հնարավոր ապահովագրության ծառայությունները դիտարկել և հաշվարկել է գնման մնացած ժամանակի գործակցի հաշվի առնմամբ, որը տվյալ պարագայում դիտարկվել է որ հավասարաչափ գործակցով և գնման մնացած 10,5 ամիսների համար առաջարկել է 36,000,000 ՀՀ դրամ դումար, որը նվազ չէ Ընկերության կողմից հաշվարկման ինքնարժեքից, տվյալ պարագայում ինքնարժեք կարող է դիտարկել ամսական արժեք համադրած գնման հնարավոր ժամկետ, այն է 3.200.000*10,5=33.600.000 ՀՀ դրամ գումար»,* ապա Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Հրավերի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված 6-ով նախատեսված բժշկական ապահովագրության ծառայությունների մատուցման պայմանագրի տեխնիկական բնութագիր–գնման-վճարման ժամանակացույցով՝ Հավելված 1-ի համաձայն՝ ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա՝ համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված մինչև 2020 թվականի դեկտեմբերի 31-ը:

«ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը կազմակերպվել է համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի, համաձայն որի՝ մինչև ֆինանսական միջոցներ նախատեսվելը սույն օրենքով սահմանված կարգով կարող է կնքվել պայմանագիր՝ պայմանով, որ դրա շրջանակներում գնում կարող է կատարվել անհրաժեշտ ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում: Սույն մասի համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել: Սույն մասը կարող է կիրառվել, եթե՝

1) պատվիրատուն չի կարողանում նախապես կանխատեսել (հաշվարկել) գնումների համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների չափը.

2) ապրանքի մատակարարումը, աշխատանքի կատարումը կամ ծառայության մատուցումը պետք է սկսվի տվյալ գնման համար ֆինանսական միջոցներ նախատեսվելու պահից հաշված այնպիսի ժամկետում, որի ընթացքում գնման մրցակցային որևէ ձևի կիրառումը ժամկետի առումով անհնար է:

Վերոնշյալներով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Հրավերով ի սկզբանե նախատեսված է եղել, որ ծառայությունները մատուցվելու են մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը, սակայն նախատեսված չէ ծառայությունների մատուցման սկզբնաժամկետ: Ընդ որում՝ Հավելված 1-ում առկա ծառայությունների ծավալը (ծառայությունների տեխնիկական բնութագիրը) փոփոխության չի ենթարկվել, որն էլ կառաջացներ ծառայության արժեքի փոփոխության և հայտով ներկայացված գնային առաջարկի նվազեցման:

Այլ կերպ ասած՝ «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում կնքվելիք ապահովագրության պայմանագրի ուժով մինչև 2020թ. դեկտեմբերի 31-ը ապահովագրողը պարտավորվելու է հատուցել այդ պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու արդյունքում պատճառված վնասը կամ դրա մի մասը կամ տրամադրել որոշակի գումար պայմանագրով նախատեսված իրադարձության (ապահովագրական պատահարի) տեղի ունենալու ուժով՝ ըստ ապահովագրության պայմանագրի պայմանների (ծառայությունների տեխնիկական բնութագրի):

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում

է այն եզրակացության, որ «ՀՊՏՀ-ԳՀԾՁԲ-20/ԲԱԾ-1» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժելով Մասնակցի հայտը՝ գործել է իրավաչափ, ապահովելով մասնակիցների հավասար իրավունքներն՝ հիմք ընդունելով Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ և Հրավերի 5.1-րդ կետերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի դրույթներով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը,

Ո Ր Ո Շ Ե Ց

«Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ-ի կողմից 10.02.2020թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/23 ծածկագրով բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**